Ավետիք Իսահակյան

Վիկտորիա Աբովյանին, 1911թ . , հուլիսի 25, Կարին

Սիրելի Վիկտորիա.
Արդեն մի շաբաթ է, որ Կարինումն ենք. լավ օրեր անցկացրինք, բայց հոգեպես ես միշտ տխուր եմ եղել, թվում է, որ այս ճամփեն շա՜տ է երկար, և վերադարձը ո՜ւշ է լինելու:
Այսօր ճանապարհվում ենք դեպի Տրաբիզոն, վեց օրվա անծայր ճամփա է. նրանից հետո էլ ծովով երեք օր, և կհասնենք Կ. Պոլիս: Ճանապարհից կգրեմ, իսկ մանրամասը՝ Կ. Պոլսից: Ամեն օր նայում եմ «Մեծ արջին», և թվում է, որ քո հայացքն էլ է հառած այնտեղ - ա՛յ այս աստղին...

Առայժմ սրտագին համբույրներ քեզ և բժիշկին,
մնամ քո՝ Ավետիք